«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
բաժնետերերի արտահերթ ժողովի (այսուհետ՝ Ժողով)
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 16.02.2024

(Կազմված է «16» փետրվարի 2024 թ.-ին և բաղկացած է 3 (երեք) թերթից)

Ժողովի անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Ժողովի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝ 2024 թվականի փետրվարի 16
Ժողովի սկիզբ՝ ժամը 14:00

Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովին ներկա էին 62.923.840 ձայնի իրավունք ունեցող բաժնետերերից 62.112.468 ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր:

Ժողովին ներկա էին՝

- Վահան Հարությունյանը՝ 10 259 404 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր.
- Միխաիլ Հարությունյանը՝ 10 400 000 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր.
- Տիգրան Հարությունյանը՝ 10 400 000 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր.
- «Մորակո Հոլդինգս» ՍՊԸ՝ 31 053 064 հատ հասարակ անվանական արժեքով բաժնետոմսերի սեփականատեր, որի անունից հանդես էր գալիս ընկերության տնօրեն Կարինե Հայրապետյանը:

Այսպիսով, Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովին ներկա էին ընկերության բաժնետոմսերի 98,710549 % ներկայացնող բաժնետերերը՝ քվորումն ապահովված էր, Ժողովն իրավասու էր:

Քվեարկության է դրվել Ժողովի նախագահին և քարտուղարին ընտրելու հարցը: Առաջարկվել է Ժողովի նախագահ ընտրել Վահան Հարությունյանին, իսկ Ժողովի քարտուղար՝ Միխաիլ Հարությունյանին:

Վահան Հարությունյանը (10 259 404 ձայն)՝ ԿՈՂՄ

Միխաիլ Հարությունյանը (10 400 000 ձայն)՝ ԿՈՂՄ

Տիգրան Հարությունյանը (10 400 000 ձայն)՝ ԿՈՂՄ

«Մորակո Հոլդինգս» ՍՊԸ (31 053 064 000 ձայն)՝ ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 62.112.468 ձայն (*ընկերության բաժնետոմսերի 98,710549 % ներկայացնող բաժնետերեր*), դեմ՝ 0 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն,

Քվեարկությամբ Ժողովը որոշել է Ժողովի նախագահ ընտրել Վահան Հարությունյանին, իսկ քարտուղար՝ Միխաիլ Հարությունյանին:

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ՝

Ընկերության կանոնադրական կապիտալի ավեացմամբ պայմանավորված՝ Ընկերության կանոնադրության փոփոխության հաստատում:

Օրակարգի հարցի կապակցությամբ ելույթ է ունեցել ժողովի նախագահ Վ. Հարությունյանը և նշել, որ Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) 2024 թվականի հունվարի 24-ի թիվ 24.01.2024 որոշմամբ որոշվել է Ընկերության տեխաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը՝ կուտակված շահույթի մի մասը՝ 314.619.200 (երեք հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար երկու հարյուր) փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Վ. Հարությունյանը հայտնեց, որ կուտակված շահույթի մի մասը՝ 314.619.200 (երեք հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամը, Ընկերության կանոնադրական կապիտալ փոխանցելու եղանակով կանոնադրական կապիտալը ավելացնելու արդյունքում Ընկերության մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմել է 160 (հարյուր վաթսուն) ՀՀ դրամ (ավելացել է 5 (հինգ) ՀՀ դրամով), իսկ Ընկերության կանոնադրական կապիտալը՝ 10,067,814,400 (տասը միլիարդ վաթսունյոթ միլիոն ութ հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ կազմված 62,923,840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ հասարակ անվանական բաժնետոմսերից (62,923,840*160=10,067,814,400): Վ. Հարությունյանը նշեց նաև, որ պայմանավորված կանոնադրական կապիտալի ավելացմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել Ընկերության կանոնադրության մեջ:

Օրակարգի հարցը դրվել է քվեարկության:

Վահան Հարությունյանը (10 259 404 ձայն)՝ ԿՈՂՄ

Միխաիլ Հարությունյանը (10 400 000 ձայն)՝ ԿՈՂՄ

Տիգրան Հարությունյանը (10 400 000 ձայն)՝ ԿՈՂՄ

«Մորակո Հոլդինգս» ՍՊԸ (31 053 064 000 ձայն)՝ ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 62.112.468 ձայն (*ընկերության բաժնետոմսերի 98,710549 % ներկայացնող բաժնետերեր*), դեմ՝ 0 ձայն, ձեռնպահ՝ 0 ձայն,

Օրակարգի հարցի կապակցությամբ ժողովը որոշել է՝

1. Ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրության 4-րդ գլխի 4.2-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,067,814,400 (տասը միլիարդ վաթսունյոթ միլիոն ութ հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է 62,923,840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 160 (հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

Բոլոր 62,923,840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի առավելագույն ծավալը կազմում է 8,506,324,480 (ութ միլիարդ հինգ հարյուր վեց միլիոն երեք հարյուր քսանչորս հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ կազմված 160 (հարյուր վաթսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով 53,164,528 (հիսուներեք միլիոն հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր քսանութ) հատ սովորական անվանական բաժնետոմսերից»:

2. Հաստատել Ընկերության կանոնադրության փոփոխությունը:

Ժողովի նախագահ՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ժողովի քարտուղար՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ